ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» դեկտեմբերի 2013թ. N 424 - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 349-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 71-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1265 -Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Աշոտ Սամսոնյանի հետ 2012 թվականի օգոստոսի 28-ին կնքված N5 աշխատանքային պայմանագրի 2.2 կետը և Աշոտ Սամսոնյանի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Աշոտ Սամսոնյանի մասին» N349-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   որոշման 1-ին կետում «մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի դեկտեմբերի 28-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ